DEFENSE COUNCIL OF WESTERN ARMENIA

ԱՐԵՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ա. Հ. Պ. Խ.

P.O.BOX 8022 Phone:(818) 427-7872 ,(818) 331-9405
La Crescenta, CA 91224
email:westernarmenia@gmail.com / sevres1920@gmail.com

Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Պրն. Սերժ Սարգսյան
Թուրքիոյ Նախագահ Պրն. Ապդուլլահ Գյուլ

Յարգելի Նախագահներ,

Սրտանց ողջունում ենք ձեր հանդիպումները. Միշտ էլ Առաջնորդներն են որոշել ազգերի ու պետութիւնների գնալիք ուղին. Անկեղծօրէն ցանկանում ենք, որ ձեր հանդիպումները սկիզբ լինեն այն ուղու, որը մեր երկու ժողովուրդներին կ՝հասցնի փոխադարձ հասկացողութեան, յարգանքի եւ համագործակցութեան եզրերի:

Նման պարագան օգտաւետ է լինելու ողջ աշխարհի համար, ուստի եւ մեզ բարեկամ երկրների անկեղծ շահագրգռուածութիւնը. Ամենից օգտուողը մեր երկու ժողովուրդներն են լինելու:

Մենք ներկայացնում ենք Արեւմտեան Հայաստանի Էրզրումի, Տարոն-Տուրուբերանի, Վասպ-ուրականի եւ Համշէն-Տրապիզոնի տարագիր հայութեան սերունդներին՝ նրանց գլխագոր ներկա-յացուցչական մարմինն ենք.

Մենք չափազանց հետագրգռուած ենք հայ եւ թուրք յարաբերութիւններով, քանի որ՝ ըստ էութեան իրաւատեր եւ շահագրգիր կողմ ենք հանդիսանում:

Ձեր ստանձնած կամ ստանձնելիք առաքելութեան յաջողութեան, եւ մեր ակնկալիքների համար ցանկանում ենք ձեզ ամէն մի ճշմարտութիւն տեսնելու, ընդունելու եւ դրանց համեմատ լուծումներ որոշելու երկուստեք կամք եւ կարողութիւն. Մեր երկու ժողովուրդները համատեղ կեցութեան ընթացքում շատ մեծագործութիւններ են արել, նոյնիսկ Ստամբուլի գրաւումը առանց հայերի հնարաւոր չէր. Այդ մասնակցութեան ու նուիրումի համար հիմնուեց Ստամբուլի հայոց Պատրիարքութիւնը՝ կրօնական, դատական եւ այլ լայն իրաւասութիւններով:

Սակայն պատմական հետագա հանգամանքները այնպիսի ընթացք ունեցան, որ բացառուեցին մեր երկու ժողովուրդների համատեղ կեցութիւնը. Միլիոններով զոհեր կրեցինք, եւ զենք վերցնողներն էին, որ հիմնականում փրկուեցին:

Հակառակ մեր կամքի սկսուած Առաջին համաշխարհային պատերազմում մեր մասնակցութեան արդիւնքով անբեկանելի որոշումներ են ընդունուած, որոնց համաձայն Թուրքիայի տիրապետութիւնը ապօրենի է Արեւմտեան Հայաստանի Էրզրումի, Տարոն-Տուրուբերանի, Վասպուրականի եւ Համշէն-Տրապիզոնի տարածքներից 40 հազար քառ.մղոն տարածքի՝ ինչպէս նաեւ դրանից արեւելք տարածուող Հայկական հողատարածքների նկատմամբ՝ համաձայն 1920.Օգոստոսի 10-ին ստորագրուած Սեւրի խաղաղութեան պայմանագրի եւ ԱՄՆ-ի 28-րդ նախագահ Վուդրօ Ուիլսոնի 1920 թ.Նոյեմբեր 22-ի իրաւարարական վճռի. Բացի այդ՝ ընդունուածը միայն հայերիս եւ թուրքերիս չի վերաբերում, այլեւ համաշխարհային խաղաղութեան հասնելու գլխաւոր նախապայմաններից մէկն է, ուստի սահման բացել-փակելու, շրջափակման կամ Արցախի հարցի լուծման շուրջ սակարկութեան առարկա չի կարող հանդիսանալ:

Մեր ժողովուրդների երաշխաւորուած ապագան անհամեմատ աւելին է Պաքու-Ջեյհան նաւթամուղի ու այլ ուղիների բերած ամէն մի շահույթից:

Հայ-թուրքական յարաբերութիւններում հնարաւոր սխալներից ու անհասկացողութիւններից զերծ մնալու համար անհրաժեշտ գտանք վերոգրեալը նշել՝ նաեւ յիշեցնել, որ հայերիս կատարուած հողային այդ հատկացումները հայերիս նկատմամբ ցեղասպանութեան դիմաց հատուցում չեն:

Պատմութիւնը սխալներ չի հանդուրժում: Իմաստուն եղէք:

Արեւմտեան Հայաստանի Պաշտպանութեան Խորհուրդի

Քաղաքական Բաժանմունք